***Գավիթ***

Գտնվում է եկեղեցու արեւմտյան կողմում: 1046*1058սմ չափերով սեղանաձեւ հատակագծով կառույց է: Շքամուտքը արեւմուտքից է, շարված ծակոտկեն մուգ մոխրագույն տեղական մաքրատաշ բազալտե քարերով եւ կրաշաղախով, իսկ մյուս պատերը՝ անմշակ որձաքարով ու կավահողով: Պահպանված են պատերը մեկ-երկու շարքի չափով: Շքամուտքի մասում օգտագործված է մաքրատաշ քարերով շարվածք: Դժվար է տարբերակել թե այդ անմշակ շարվածքով պատերը նախնական են թե՝ ոչ: Շքամուտքի պահպանաված մեծածավալ եզրաքարերը տրամատված են, փորագրված բազմաթիվ գծային խաչապատկերներով : Գավթի ներսում առկա  են վերջինիս արտաքին կամարի եզրային տրամատված քարեր:



36. Գավթի եւ եկեղեցու ընդհանուր տեսքը արեւմուտքից


37. *Գավթի ներքին պատերի տեսքը* արեւելքից



38. Գավթի շքամուտքի արտաքին տեսքը



39. Գավթի շքամուտքի ներքին  տեսքը



40. Գավթի շքամուտքի բարավորի վրայի կամարի քարեր



41. Գավթի հյուսիսային պատի ներքին տեսքը



42. Գավթի հարավային պատի ներքին տեսքը